ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/177

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.10.2019թ. թիվ 26/26-1/17433-2019 գրությամբ «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 24.10.2019թ. թիվ 01.3/11/25803-19 գրության հիման վրա, 24.10.2019թ. թիվ 26/26-1/17433-2019 գրությամբ նախաձեռնել է «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.10.2019թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում Ընկերության կողմից հավաստվում է, որ ՀՀ օրենսդրությանը համաձայն ե-ինվոյսինգ (e-invoice) համակարգից կարող են օգտվել միայն ՀՎՀՀ ունեցող անձինք:

Հետևաբար Ընկերության կողմից նշված համակարգով դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը ոչ մի կերպ չէր կարող ստորագրվել թուրքմենստանյան գնորդի կողմից վերոհիշյալ համակարգով: Դրա համար թուրքմենստանյան գնորդի համար գրվել է նույն հաշվի անգլերեն օրինակը, որը կնքված և ստորագրված է, ինչպես նաև թարգմանչական ծառայությունով թարգմանված և հաստատված:

Իսկ տեխնիկական բնութագրում անհամապատասխանություններ արձանագրելուց չի նշվել դրանց տեսակը:

«ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/177 ընթացակարգի շրջանակներում 29.10.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.10.2019թ. թիվ 01.3/11/25803-19 գրությամբ ներկայացրել է «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/177 ընթացակարգի շրջանակներում 29.10.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերը և ապրանքի տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.10.2019թ. թիվ 26/26-1/17433-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 24.10.2019թ. թիվ 01.3/11/25803-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը

էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ....

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 ենթակետով նախատեսվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջին իր

համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրի հատկանիշներում, ինչպես նաև ներկայացված նախկինում կատարված պայմանագրի հաշիվ-ապրանքագրում, ինչի շտկման վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից շտկված փաստաթղթերը նույնպես չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

Այսպիսով՝ «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացվել է Ընկերության և թուրքմենական ընկերություն հանդիսացող «ԱուտոՀաուս ՋԻ ԷՄ ԲԻ ԷՅԶ» ընկերության միջև 31.01.2017թ. կնքված 46 562.23 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Գնահատող հանձնաժողովը որպես անհամապատասխանություն մատնանշել է, որ պայմանագրի հաշիվ-ապրանքագիրը ստացողի կողմից հաստատված չէ:

Գործում առկա է պայմանագրի գնի չափով (46 562.23 ԱՄՆ դոլար) 05.05.2017թ. թիվ F01/16 հաշիվ-ապրանքագիրը (անգլերեն և հայերեն տարբերակներով), որը հաստատված է թե Ընկերության և թե պայմանագրի մյուս կողմ հանդիսացող «ԱուտոՀաուս ՋԻ ԷՄ ԲԻ ԷՅՉ» ընկերության կողմից, ինչպես նաև «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված թիվ Բ7770388610 հաշիվ-ապրանքագիրը (22572117 ՀՀ դրամ), որը հաստատված է միայն Ընկերության կողմից: Դրա հետ մեկտեղ պայմանագրին կից ներկայացվել է նաև կողմերի միջև 05.05.2017թ. կնքված ապրանքների հանձնման-ընդունման թիվ 1 ակտը, որի համաձայն «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ի կողմից հանձնվել է, իսկ «ԱուտոՀաուս ՋԻ ԷՄ ԲԻ ԷՅՉ» ընկերության կողմից ընդունվել է պայմանագրով նախատեսված 46 562.23 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ ապրանքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Ուսումնասիրելով «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված վերոհիշյալ պայմանագիրը և կից փաստաթղթերը, գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացվել է պատշաճ հաշիվ-ապրանքագիր (05.05.2017թ. N F01/16), որը հաստատված է պայմանագրի կողմերի կողմից և համապատասխանում է պայմանագրով սահմանված գնին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ անհամապատասխանություններ արձանագրվել են նաև Ընկերության կողմից ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրի հատկանիշներում, սակայն նույն արձանագրության մեջ չեն նկարագրվել անհամապատասխանությունները:

Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված 17.09.2019թ. ծանուցման մեջ նշվել է, որ Ընթացակարգի որակավորման փուլում ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ գնման

առարկայի տեխնիկական բնութագրի հատկանիշներում, սակայն կրկին չեն նկարագրվել անհամապատասխանությունները:

Այս տեսանկյունից Կարգի 46-րդ կետը սահմանում է, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, **<u>իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թե արձանագրությամբ և թե Ընկերությանը Կարգի 47-րդ կետի համաձայն ուղարկած ծանուցման մեջ չի նկարագրել ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները, մինչդեռ Կարգի 46-րդ կետի համաձայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մանրամասն նկարագրել Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները, հնարավորություն ընձեռնելով Ընկերությանը շտկելու դրանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ն «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԱՀ/2019-ՃՈ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.10.2019թ. թիվ 26/26-1/17433-2019 գրությամբ «ՆԱ-ՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**